

## <<Հրդեհների վիճակագրություն>>

2013թ. ընթացքում ՊՀ և ՏԱ տեսչության կողմից հաշվառվել է 1602 հրդեհ՝ շուրջ 15 միլիարդ դրամի նյութական վնասով: Հրդեհներից զոհվել է 11, վնասվածքներ ստացել՝ 34 մարդ: 2012թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել էր 1405 հրդեհ՝ շուրջ 0.5 միլիարդ դրամի նյութական վնասով, հրդեհներից զոհվել էր 18 և վնասվածքներ ստացել՝ 236 մարդ: Այսպիսով, 2012թ.-ի համեմատ 2013թ.-ին հրդեհների քանակն աճել է 197 դեպքով (14.02%), իսկ նյութական վնասի գումարը՝ 14 505 069 278 դրամով (30.4 անգամ): Չոհերի թիվը նվազել է 7-ով (38.88%), իսկ վնասվածք ստացածներինը՝ 202-ով (85.59%): Ոչնչացել է 45 շինություն (2012թ.-ին՝ 38), 45 միավոր ավտոտրանսպորտ (2012թ.-ին՝ 41), շուրջ 1817 տոննա անասնակեր (2012թ.-ին՝ 1112):

Հրդեհների քանակը նվազել է Լոռու, Արարատի ու Շիրակի մարզերում, իսկ աճել՝ Երևան քաղաքում և մնացած բոլոր մարզերում: Հրդեհների քանակի աճը հիմնականում պայմանավորված է չոր խոտածածկով բաց տարածքներում առաջացած հրդեհներով, ինչն իր հերթին հետևանք է մեր քաղաքացիների որոշ մասի հանցավոր անփութության, երբ մոռանում են հանգցնել վառած խարույկը, կամ էլ չմարված ծխախոտն ու լուցկին նետում են չոր խոտածածկին: Նախորդ տարվա համեմատ վերը նշված տարածքներում առաջացած հրդեհների քանակն աճել է 226-ով կամ 62.43%-ով: Իսկ հրդեհներից պատճառված նյութական վնասի գումարի աճը պայմանավորված է 15.05.13թ.-ին <<Սպայկա>> ՍՊԸ բազայում առաջացած հրդեհով, որի վնասը կազմել է 14 447 703 933 դրամ (կամ ընդհանուր նյութական վնասի 96.33%-ը):

Հրդեհների 53.87%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 46.13%-ը՝ գյուղական բնակավայրերում: Դրանց 37.89%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում, 36.7%-ը՝ բաց և խոտածածկ տարածքներում, 10.48%-ը՝ ավտոմեքենաներում, 3.18%-ը՝ առևտրի, հանրային սննդի ու սպասարկման օբյեկտներում, 1.18%-ը՝ արտադրական շենքերում, 1.12%-ը՝ ավտոտնակներում, իսկ 9.45%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 49.87%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 22.09%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 13.1%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 2.8%, հրկիզումները՝ 1.31%:

Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 67-ը խոշոր և առավել խոշոր են (նախորդ տարի՝ 47), որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է 14 812 724 539 դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 98.76%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝

- 1) 15.05.13թ.՝ ք.Երևան, <<Սպայկա>> ՍՊԸ բազա՝ 14 447 703 933 դրամ:
- 2) 01.05.13թ.՝ Արմավիրի մարզ, գ. Տանձուտ <<Պորշ կայեն>> մակնիշի ավտոմեքենա՝ 29 000 000 դրամ:
- 3) 19.11.13թ.՝ Կոտայքի մարզ, գ. Կամարիս, դեզ՝ 24 000 000 դրամ:
- 4) 08.04.13թ.՝ ք.Երևան, Արգիշտի 11/4, ավտոկայանատեղ՝ 21 270 294 դրամ:
- 5) 19.07.12թ.՝ Արմավիրի մարզ, գ. Փշատավան, <<Միցուբիշի>> մակնիշի ավտոմեքենա՝ 11 900 000 դրամ:
- 6) 27.05.13թ.՝ Սյունիքի մարզ, գ. Ծավ, <<Լետոնա>> ՓԲԸ ՀԷԿ՝ 20 154 250 դրամ:
- 7) 10.03.13թ.՝ ք.Երևան, Միկոյան 13, <<Արտ-Դիմեդ>> ՍՊԸ՝ 13 818 655 դրամ:
- 8) 06.07.13թ.՝ ք.Երևան, թիվ 123 մանկապարտեզ՝ 10 708 633 դրամ:

2013թ.-ի ընթացքում թվով 11 հրդեհներում զոհվել է 11 քաղաքացի, իսկ 2012թ.-ին՝ թվով 17 հրդեհներում զոհվել էր 18 քաղաքացի: Ինչպես նախկինում, այնպես էլ 2013թ.-ին զոհերով

հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, անզգուշությունը ծխելուց, ինչպես նաև էլեկտրական սարքավորումների և վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը: Ձոռներն արձանագրվել են հետևյալ տարածաշրջաններում. Շիրակ՝ 5, ք.Երևան և Գեղարքունիք՝ 2-ական, Արմավիր և Լոռի՝ մեկական: Դրանց գերակշիռ մասը՝ 9-ը, գրանցվել է բնակելի հատվածում, որոնցից 5-ը միայնակ բնակվող տարեց մարդիկ են:

2013թ.-ի ընթացքում վնասվածքներ են ստացել 34 քաղաքացիներ՝ 202-ով (կամ 85.59%) պակաս, քան նախորդ տարի: Թվով 20 մարդիկ վնասվածքներ են ստացել բնակելի հատվածում, և 9-ը՝ ավտոմեքենաներում, ԲԼԿ-ում՝ 2, մեկական՝ ԱԳԼՃԿ-ում, բազայում և հանրային սննդի օբյեկտում: Վնասվածքները գրանցվել են ք.Երևանում՝ 14, Արարատում՝ 6, Շիրակում և Արմավիրում՝ 4-ական, Արագածոտնում և Կոտայքում՝ 2-ական, Լոռիում և Սյունիքում՝ 1-ական: Դրանց առաջացման պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, էլեկտրական ու գազով գործող սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, անզգուշությունը ծխելուց, վառելանյութի արտահոսքը և պայթյունը: Վնասվածքներ ստացածներից 3-ը երեխաներ են, իսկ 6-ը՝ տարեցներ:

Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 336 որոշում, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանների դատախազությունների կողմից: Դատաքննչական մարմիններ են ուղարկվել 145 հրդեհի նյութեր, որոնցից 63-ով քրեական գործի հարուցումը մերժվել է: Հարուցվել է 28 քրեական գործ, որոնցից 5-ը կասեցվել է, 6-ը՝ կարճվել, իսկ 43 նյութեր գտնվում են վարույթում:

ՀՀ ԱԻՆ ՊՀ և ՏԱՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ  
Ս. Հայրապետյան